ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Փոստային կապի ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «PDU-126-01-24» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի հունվարի 25-ին կնքված « PDU-126-01-24» ծածկագրով պայմանագրում 2024 թվականի մարտի 20-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	Փոստային կապի լրացուցիչ ծառայության ձեռքբերման նպատակով պայմանագրի գումարը 600.0 հազար դրամով ավելացել է:
Փոփոխության նկարագրություն՝	Պայմանագրի 3.3 կետում «600 000 (վեց հարյուր հազար)» բառերը փոխարինել «1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար)» բառերով,
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 8.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Տ.Մեհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ gnumner@env.am**:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«25» հունվարի 2024թ. № PDU-126-01-24 պայմանագրի

ք.Երևան «20» «03» 2024թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Աթանեսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Հաճախորդ» կամ «Պատվիրատու», մի կողմից, և «Հայփոստ» ՓԲԸ-ն, ի դեմս կորպորատիվ հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար Գ.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության գլխավոր գործադիր տնօրենի՝ լիազորություններ վերապահելու մասին 03.10.2023թ-ի թիվ 2467-Ա հրամանի հիման վրա, այսուհետ՝ «Ընկերություն», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2024 թվականի հունվարի 25-ին կնքված «№ PDU-126-01-24» պայմանագրի 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2024 թվականի հունվարի 25-ին կնքված «№ PDU-126-01-24» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1.1.1. Պայմանագրի 3.3 կետում «**600 000 (վեց հարյուր հազար)**» բառերը փոխարինել «**1 200 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար)**» բառերով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Հայփոստ» ՓԲԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք.Երևան, 0002, Սարյան 22
ՖՆ գործառնական վարչություն	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 1930003703156000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02507464
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	Կորպորատիվ հաճախորդների սպասարկման և փոստային պրոդուկտների վարչության ղեկավար
Ս.Աթանեսյան	***Գ.Բաղդասարյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**